ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Լիպարիտ Ռոբերտի Մելիքջանյանս, ծնվել եմ 1974 թվականի մայիսի 22-ին Իջևան քաղաքում:

1981-1991թթ. ընդունվել և ոսկե մեդալով ավարտել եմ Իջևանի թիվ 2 միջնակարգ դպրոցը:

1991-1996թթ. ընդունվել և գերազանցության դիպլոմով ավարտել եմ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը՝ ստանալով իրավաբանի որակավորում:

1996-1998թթ. ծառայել եմ ՀՀ զինված ուժերում: Ստանալով լեյտենանտի զինվորական կոչում՝ 1996-1997թթ. ծառայել եմ Գորիսի բրիգադի 2-րդ գումարտակում՝ որպես վաշտի հրամանատարի տեղակալ անձնակազմի գծով:

1997թ.-ին տեղափոխվել եմ Վազգեն Սարգսյանի անվան զինվորական ակադեմիա՝ որպես վաշտի հրամանատարի տեղակալ, միաժամանակ, ակադեմիայի սաներին դասավանդել եմ <<Զինվորական հանցագործություններ>> առարկան:

1997թ.-ին ընդունվել եմ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի հեռակա ասպիրանտուրան:

1999-2003թթ. աշխատել եմ "Գրեյթ Արարատ" ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան:

2005թ. պաշտպանել եմ <<Միջազգային հաշվարկներում մուրհակի կիրառման հետ կապված իրավական հիմնախնդիրները>> վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը և ստացել իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2005թ.-ից մինչ օրս աշխատում եմ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնում՝ որպես դասախոս, 2007թ.-ից՝ որպես ասիստենտ:

2014թ.-ին ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ ստացել եմ դոցենտի գիտական կոչում՝ իրավաբանություն մասնագիտությամբ:

Հեղինակ և համահեղինակ եմ մի շարք գիտական հոդվածների, գիտական աշխատությունների և ուսումնական ձեռնարկների:

Անկուսակցական եմ:

Ամուսնացած եմ, ունեմ 2 երեխա: